ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«20» Մարտի 2023 թ. N 25-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 7-րդ կետերով, 37-րդ հոդվածի 7-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով 2023 թվականի մարտի 3-ի «ԱԳԼ ԳՐՈՒՊ» և 2023 թվականի մարտի 1-ի «ԱՐՏՄԱԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից ներկայացված դիմումները

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել ուժը կորցրած ճանաչելու միջոցով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված կազմակերպությունների շինարարության իրականացման և քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման լիցենզիաները և ներդիրները մասնավորապես՝

1) ք. Երևան, Բակունցի փող. 4 շ., բն. 35 հասցեում գրանցված «ԱԳԼ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման N 16837 լիցենզիան և լիցենզիային կից բնակելի, հասարակական և արտադրական N 16837-01, հիդրոտեխնիկական N 16837-03 և էներգետիկ N 16837-04 ոլորտների ներդիրները.

2) Տավուշի մարզի, գ. Այգեհովիտ, 2փող., 35 հասցեում գրանցված «ԱՐՏՄԱԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության քաղաքաշինության բնագավառում

քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման N 17225 լիցենզիան և լիցենզիային կից բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր N 17225-1, էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր N 17225-8 ոլորտների ներդիրները:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

3/20/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ